ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հունիսի 25-ից 29-ը
Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

1) Գոհար Մինասյան՝ ՀՀ ՊԵԿ Մաքսային հսկողության վարչության մաքսային վարչարարության և մաքսային գործի զարգացման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ /ժթ./:

2) Լիլիթ Բաղիրյան՝ ՀՀ ՊԵԿ Արևմտյան մաքսատուն-վարչության գլխավոր մաքսային տեսուչ-իրավաբան:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 2023թ. հունիսի 25-ից 29-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մաքսային և առևտրի՝ Համաշխարհային մաքսային կազմակերպության գիտելիքի ակադեմիայի գործնական ուսուցումն անց է կացվում յուրաքանչյուր տարի: Այս տարի կայանալիք ակադեմիական ուսուցմանը քննարկվեցին մաքսային ոլորտին առնչվող ամենաարդի թեմաները, իրականացվեց նաև փորձի փոխանակում՝ մաքսային գիտելիքների պրակտիկ կիրառելիության վերաբերյալ, մաքսային մարմիններում հավասար իրավունքների և հնարավորության սկզբունքների ձևավորման

նպատակով, որը հնարավորություն կընձեռի տնտեսվարող սուբյեկտների, ֆիզիկական անձանց և մաքսային մարմինների համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

5. Քննարկված թեմաները՝

Քննարկվեցին «Կանաչ մաքսատուն», «Ապրանքների ներդաշնակեցման համակարգ» (The Harmonized System), «Գենդերային հավասարություն», «Մեծածավալ տվյալներ (WCO Data Model, WCO Data Strategy)», «Մաքսային արժեքի սակագնային կարգավորում» թեմաները, ինչպես նաև տեղի ունեցավ քննարկում՝ առնչվող թեմաների վերաբերյալ՝ ՀՄԿ Գլխավոր քարտուղարի, գլխավոր տնօրենների և ուսուցման մասնակիցների միջև:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ուսուցման ընթացքում առանձին հանդիպումներ տեղի չեն ունեցել, այնուամենայիվ աշխատանքային քննարկումներ են տեղի ունեցել ուսուցմանը մասնակցող երկրների մաքսային մարմինների ներկայացուցիչների և բիզնեսի ներկայացուցիչների հետ, որոնց ժամանակ բարձրացվել է պրակտիկ կիրառելիության խնդիրներ, ինչպիսիք են ապրանքների ճիշտ դասակարգմանը, թույլատվական փաստաթղթերի և մաքսային արժեքի սակագնային կարգավորմանը վերաբերող խնդիրները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ուսուցման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել կամ գրավոր որոշումներ չեն ընդունվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ուսուցման ընթացքում այլ երկրների հետ փորձի փոխանակումն ավելի հաճախ ունենալու համար առաջարկվեց առցանց տարբերակով ՀՄԿ անդամների հետ շփում նախատեսել և ՀՄԿ Գլխավոր քարտուղարը առաջարկեց հարցը կարգավորել ՀՄԿ կայքում հասանելի «CLiKC» հարթակի միջոցով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Գոհար Մինասյան

Լիլիթ Բադիրյան

30.06.2023 թվական